Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ Սիրանուշ Սահակյանի հարցազրույցը՝ «Հանրային ծառայություն» շաբաթաթերթին

1. Նախ՝ քանի որ արդեն տարեվերջ է, կխնդրեի ընդհանուր գծերով ներկայացնել անցնող տարվա ընթացքում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության հիմնական արդյունքները, առկա խնդիրներն, ինչպես նաև առաջիկա անելիքները:

Ներդրվել է հայտարարագրման էլեկտրոնային համակարգը, ապահովվել է դրա հասանելիությունը մի շարք պետական մարմինների էլեկտրոնային գրանցամատյաններին և շտեմարաններին, որոնց կապակցման ուղղությամբ տարվող տեխնիկական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: Շարունակաբար իրականացվում է թափանցիկ և բաց ռեժիմով հայտարարագրերի հրապարակայնացումը Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում www.ethics.am:

2015 թվականի ընթացքում ընդլայնվել է նաև հայտարարագրերում ներառված հրապարակման ենթակա տվյալների ցանկը: Մասնավորապես, վերացվել են բարձրաստիճան պաշտոնատար անձին, նրա ամուսնուն, համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս ու չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող գույքի առանձին տեսակների համար նախկինում սահմանված գործարքների արժեքային շեմերը:

Հանձնաժողովի կողմից վերանայվել են Հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովվող մի շարք կարգեր և ընթացակարգեր, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրերի ներկայացման կարգը, բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով լրացման և ներկայացման (հանձնման) ուղեցույցը, որը նաև ինտեգրվել է էլեկտրոնային համակարգին, մշակվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրերի վերլուծության մեթոդադիկան:

Միջազգային փորձագետների աջակցությամբ աշխատանքներ են իրականացվել բարձրաստիճան պաշտոնատար անձի տիպային վարքագծի կանոնագրքի մշակման, էթիկայի կրթության ուղղությամբ, ինչպես նաև՝ միջազգային փորձի ուսումնասիրության, օրենսդրական բացերի վերհանման և դրանց առնչությամբ առաջարկությունների և հետագա քայլերի մշակման:

Հանձնաժողովի զարգացման հեռանկարների, գործունեության ընթացքում վերհանված խնդիրների և դրանց հաղթահարման ուղիների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունն արտացոլված է Հանձնաժողովի ռազմավարության նախագծի մեջ, որի առնչությամբ ստացված միջազգային փորձագիտական կարծիքների ամփոփման արդյունքում այն շուտով կհաստատվի և հրապարակայնացվի:

2. **Հանձնաժողովը ստեղծել է հայտարարագրերը էլեկտրոնային եղանակով լրացնելու համակարգ: Այն զուտ տեխնիկական խնդիրներ է լուծում, թե՞ որոշակի նորարարություններ է պարունակում: Ինչի՞ն է հիմնականում միտված առցանց հայտարարագրերի այս համակարգի ներդրումը:**

Հայտարարագրման էլեկտրոնային համակարգը ներառում է ոչ միայն տվյալների առցանց լրացման և հրապարակման համակարգը, այլև էլետրոնային ստորագրության համակարգ, վիճակագրության վարման, տվյալների հավաստիության ստուգման և ըստ առանձին ռիսկային ցուցանիշների՝ վերլուծության և անհամապատասխանությունների հայտնաբերման ավտոմատացված համակարգերը: Համակարգը հագեցած է հայտարարագրերի լրացման ու հանձնման մատչելի ու պարզ ուղեցույցով, հուշումների գործիքներով, պարզաբանումների ցուցումներով, ինչպես նաև գույքի տիպական անվանումների ցանկերով: Այն հայտարատուներին հնարավորություն է ընձեռում խուսափելու հայտարարագրերի լրացման գործընթացում տեխնիկական վրիպակներից և ուղեցույցի պահանջների շեղումներից: Հարկ է նկատել, որ 2014-2015թթ. ընթացքում օրենքով սահմանված ժամկետում տարեկան հայտարարագրերի ներկայացման ցուցանիշը աճել է՝ 69.1 տոկոսից դառնալով 81.9 տոկոս: Միաժամանակ էլեկտրոնային համակարգում ստեղծվել է ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծության ենթահամակարգ, որի շահագործման առաջին փուլում հնարավորություն է ընձեռնվել համակարգից դուրս բերելու կոնկրետ ռիսկային չափորոշիչներ պարունակող հայտարարագրերը:

3. **Պաշտոնատար անձանց և նրանց փոխկապակցված անձանց հայտարարագրերի թափանցիկությունն այսօր նկատելիորեն բարձր մակարդակի է, և ցանկացած անձ կարող է ծանոթանալ հայտարարագրերի ռեեստրին: Բայց ի՞նչ լծակներ կամ լիազորություններ ունի հանձնաժողովը բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների շարժը վերահսկողության ներքո պահելու, կասկածելի շեղումներին արձագանքելու իմաստով**:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը սահմանում է հայտարարագրերը վերլուծելու Հանձնաժողովի գործառույթը: Այդ նպատակով Հանձնաժողովի կողմից մշակվել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրերի վերլուծության,մեթոդիկան: Այն

ներառում է հայտարարագրերի գրասենյակային, մաթեմատիկական և մանրամասն վերլուծության փուլերը:

Պետական մարմինների էլեկտրոնային շտեմարաններին հայտարարագրման էլեկտրոնային համակարգի համակցման տեխնիկական աշխատանքների ավարտման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն հայտարարագրերում արձանագրված տվյալների հավաստիության ստուգման, ինչպես նաև որոշ անհամապատասխանությունների բացահայտման համար:

Միաժամանակ, նշենք, որ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում քննարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, որը վարչական պատասխանատվություն է սահմանում հայտարարագրմանն առնչվող խախտումների համար:

4. **Հանձնաժողովը, սկսած 2013 թվականից, բարձրաստիճան պաշտոնատար անձանց վարքագծի կամ շահերի բախման խնդիրների առնչությամբ ընդամենը 4 վարույթ է հարուցել: Ինչո՞վ է դա պայմանավորված**:

Էթիկայի կանոնների խախտումների կապակցությամբ վարույթների հետ կապված նշեմ, որ Հանձնաժողովը, որպես կանոն, խախտման դեպքերին անդրադառնում է միայն այն անձի դիմումի հիման վրա, ում հանդեպ դրսևորվել է ոչ էթիկական վարքագիծ: Նշեմ նաև, որ Հանձնաժողովը էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթներ կարող է հարուցել ոչ բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ՝ Հանձնաժողովը ԱԺ պատգամավորների նկատմամբ վարույթ չի կարող հարուցել, իսկ դատավորների, դատախազների և սահմանադրական դատարանի անդամների նկատմամբ՝ կարող է հարուցել միայն այն դեպքում, երբ առերևույթ խախտումը կապված չի եղել նրանց պաշտոնեական լիազորությունների իրականացման հետ:

Ինչ վերաբերում է շահերի բախման առնչությամբ վարույթների սակավությանը, ապա այս դեպքում օրենսդրական գործող կարգավորումները, ինչպես նաև Հանձնաժողովի նյութական և մարդկային ներուժի սակավ լինելու հանգամանքը թույլ չեն տալիս լիարժեքորեն կիրառել շահերի բախման իրավիճակներին վերաբերող սահմանափակումները:

5. Փորձը ցույց է տալիս, որ հայաստանյան իրականության մեջ էթիկական կարգավորման դաշտը, էթիկայի հանձնաժողովների ինստիտուտն այնքան էլ սահուն չի ընդգրկվում կառավարման համակարգում և համապատասխան ընկալում գտնում: Ինչո՞վ եք բացատրում այս հանգամանքը: Ըստ Ձեզ՝ ի՞նչ կարելի է կամ պետք է անել իրավիճակը փոխելու համար:

Անառարկելի է, որ էթիկայի նոր ինստիտուցիոնալ համակարգի կայացումը որոշակի ժամանակ է պահանջում: Միշտ չէ, որ էթիկայի՝ օրենսդրորեն ամրագրված կանոնները հասցեատերերի կողմից համարժեք են ընկալվում, առանձին կանոններ կարիք ունեն վերանայման, հստակեցման: Այդ առումով, հրամայական է

պաշտոնատար անձանց վարքագծի միասնական կանոնագրքի և ոլորտային կանոնագրքերի մշակումը և ընդունումը, էթիկայի կանոնների խախտման իրավական հետևանքների հստակեցումը, էթիկայի հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործնական քայլերի ձեռնարկումը: Կոնկրետ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մասով, գտնում եմ, որ Հանձնաժողովը կայացած կառույց է և ակտիվ քայլեր է ձեռնարկում՝ ուղղված իր առջև ծառացած խնդիրների լուծմանը՝ համագործակցելով իրավասու մարմինների և միջազգային կառույցների հետ:

6. Որքանո՞վ եք բավարար համարում հանրային ծառայության ոլորտում շահերի բախման հետ կապված հարաբերությունների կարգավորմանն ուղղված հայաստանյան օրենսդրությամբ սահմանված իրավական կառուցակարգերը: Արդյոք, այն մեխանիզմները, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, բավարար են այս դաշտը կանոնակարգելու, կոռուպցիոն շատ ռիսկեր նվազեցնելու համար:

«Շահերի բախում» արտահայտության իրավական բովանդակությունը բացահայտված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և օրենսդրական այլ ակտերում: Սակայն այս առումով չի դրսևորվել անհրաժեշտ միասնականություն, ինչով պայմանավորված գործնականում առաջ են գալիս խնդիրներ շահերի բախման իրավիճակի էության ընկալման, այդ իրավիճակին իրավական գնահատական տալու, ինչպես նաև դրա կանխարգելմանն ուղղված օրենսդրական կառուցակարգերի գործելիության արդյունավետության առումներով: Այդ կապակցությամբ Հանձնաժողովի կողմից մշակվել են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարմանն ուղղված առաջարկություններ, որոնք առաջիկայում կներկայացվեն ՀՀ վարչապետի որոշմամբ ձևավորված միջգերատեսչական աշխատանքային խմբի քննարկմանը, որի կազմում ընդգրկված է նաև Հանձնաժողովի անդամը: Հանձնաժողովն ակնկալում է, որ շահերի բախման ոլորտը կանոնակարգող իրավադրույթների վերանայման արդյունքում կլրացվեն սույն ոլորտում առկա օրենսդրական բացերը, կվերացվեն առկա որոշ անհստակություններ, ինչն, իր հերթին, կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազմանը:

7. «Հանրային ծառայության մասին» օրենքով դեռ 2011թ. կառավարման համակարգում ներդրվեցին մեր իրականության համար համեմատաբար նոր և խորթ այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են շահերի բախումները, նվերների ստացման սահմանափակումները, կոռուպցիոն երևույթների մասին տեղեկացումը: Բավարար համարո՞ւմ եք կառավարման ոլորտում դրանց կիրառության մակարդակը: Որքանո՞վ են այս ինստիտուտները գործնական հարթությունում այսօր կենսունակ:

Վերոնշյալ ինստիտուտների կենսունակության հարցին անդրադառնալիս, հարկ է ցուցաբերել համալիր մոտեցում: Շահերի բախման ոլորտում առկա

խնդիրներին արդեն իսկ անդրադարձ կատարվեց նախորդ հարցադրումներին արձագանքելու շրջանակներում: Ինչ վերաբերում է վերը թվարկված մյուս ինստիտուտներին, ապա դրանց գործելիության արդյունավետության առումով ևս առկա են օրենսդրական լուծումներ պահանջող մի շարք խնդիրներ, օրինակ՝ կապված «նվեր» եզրույթի սահմանման, նվեր ընդունելու, տալու, նվերի գնի (արժեքի) որոշման հետ: Դրա հետ մեկտեղ, ցանկանում եմ ընդգծել, որ վերը թվարկված ինստիտուտների կենսունակ լինելը մեծապես կախված է նաև իրավասու մարմինների հետևողական աշխատանքից, պաշտոնատար անձանց շրջանում համապատասխան մշակույթի արմատավորումից, ինչպես նաև քաղաքացիական հասարակության օժանդակությունից: